

թէ ընաւ քաղցր սրճի համը չառաւ և դառնի վրայ էլ պարզ կերպով երեսը թթուացրեց:

Մենք, ինչ և է, աւելի լաւ պատրաստութիւններ տեսանք առաջին նախարարին ընդունելու համար: Մեր խոհարար Հասանին պատուիրեցինք գործ դնել իր բոլոր հանճարը պատրաստելու մի ճաշ, որ կարողանար իսկոյն և եթ ցոյց տալ նրա արժէքը և ծառայէր որպէս նմոյշ մեր ազգային խորոտիկներին: Նա պատրաստեց դանազան տեսակի փլաւ: Նա այճառ լաւ ճաշակով ու խելքով բաղադրել էր թթուեղէնն ու քաղցրեղէնը, մսեղէնն ու բանջարեղէնը, և այդ բոլորի վրայ այնքան առատ իւղ էր ածել՝ որ նա հաւաստիացրեց, որ երկու երկրներին Շահերն իրար հետ կապելու նշանն այժմ կատարեալ էր:

Ոչ մի բան չէր կարող աւելի քաղցր ու անոյշ լինել քան մեր շարքաթները, մեր քաղցրեղէնները, նաժանաւանդ մեր գեղէնդէրէինը—Պարսկաստանին յատուկ այդ քաղցրաւենին, որից մեծ պաշար էինք վերցրել, նկատի ունենալով թէ մեր ճակատագիրը որտեղ էր առաջնորդում մեզ:

Մեր շարքաթի ամաններից մի քանիսը ճանապարհին ջարդուել էին: Հաշմը շուտեւ էր, չէր իմանում նրանց տեղ ինչ գործ ածէր: Վերջը նա յիշեց, որ անգլիական տներում ինքը տեսել էր մի քանի սպիտակ ու մի քանի ներկուած ամաններ: Նա իւրացրեց այդ ամաններից երեք հատ՝ ամենագեղեցիկներից, և շարքաթը նրանց մէջ ածելով դրեց սեղանի վրայ:

Երիտասարդ մէհմանդարը, որը պատահամա՞ք տեսաւ սեղանի վրայ դրուած ղոնչաները ¹⁾, և հէնց որ աչքն ընկաւ այդ ամանների ²⁾ վրայ, սկսեց շատ անմտաբար քոքուել: Մենք չէինք կարողանում հասկանալ թէ նա ինչ էր ուզում ասել իր քրքիջով, բայց վերջը երբ նա մեզ բացատրեց թէ այդ ամաններն ինչ բանի համար էին գործածուած անգլիացւոց տներում, մենք ստիպուեցանք ամօթի երեսը թազցնել տգիտութեան քօքի տակ, և փառք տուինք Ալլահին, որ իր նախախնամութամբ մեզ ազատեց ապականութեան աւազից:

Մենք նկատեցինք, որ վէզիւրները և ուրիշ մարդկանց զգեստի մէջ տարբերութիւն կար և եկանք այն եզրակացութեան, որ նրանք որոշ ձևի զգեստ հագնելով ցոյց են տալիս մարդկանց թէ իրանք ինչ պաշտօնի տէր են: Օրինակի համար նրանց վզերի ետևից կախուած էին սև մետաքսէ քսակներ և որովհետև այդ քսակները փոքր ինչ նման էին այն սըն-

1) Մատուցարանների մէջ դրուած ուտելիք:

Մ. Թ.

2) Նշարաններում գործ ածուող ամաններն է նշանակում: Մ. Թ.

դուռէ և ոսկեծամուկ դիպակէ քսակներին, որոնց մէջ դրուում են մեր թագաւորների և իշխանների նամակները ուրիշ տեղ ուղարկելու համար, ուստի մենք մտածեցինք, որ այդ մարդիկը (վեզիրները) գուցէ նամակատար պաշտօնեաներ են: Բայց յետվ միւս կողմից, նրանք իրանց կողքին կախել էին մի տեսակ բարակ ու երկար զէնք, որ որչափ մենք կարողացանք հասկանալ՝ մի տեսակ սուր էր, և ցոյց էր տալիս, որ դրան կրողը զինուորական է. սակայն պիտի ասել, որ այդ սուրը աւելի նման էր մեր այն շամիրներինք մէկին, որպիսին մենք բանակում եղած ժամանակ գործ ենք անում ձեռաց՝ խորոված պատրաստելու համար: Մի խօսքով այդ շամիրանման սրից երևում էր, որ նրանց կրող մարդիկը իրանց թագաւորի խոհարարներն էին:

Երիտասարդ մէհմանդարից հետաքրքրուելով տեղեկացանք որ այդ տեսակ զգեստը ֆրանկների պաշտօնական զգեստն է, որ նրանք հագնում են իրանց Շահի ներկայանալիս, և որ այժմ հագել էին ի պատիւ զեսպանի:

Արտաքին տեսքով՝ անգլիացւոց առաջին նախարարը դերվիշի նման էր: Նա այնքան մեղմ, այնքան գլխոտ մարդ էր երևում, որ մենք զարմացանք թէ նրա պէս մարդը ինչպէս է կարող այդպիսի մի մեծ երկրի գործերը վարել, մանաւանդ երբ մտածեցինք թէ ինչքան ոյժ, եռանդ և արիւնհեղութիւն է հարկաւոր մի մեծ ժողովրդի կարգի տակ պահելու համար:

Մեր Շահերը, որոնք ընդհանրապէս իրանց մեծ վեզիրների անելիք գործերն իրանք են կատարում, մեր երկրում կառավարութեան մեծ գործիքներն են. սակայն թիւրքիայում ամեն մի նոր մեծ-վեզիր՝ իբր լաւ վճիռ տուող մարդ՝ հռչակ շահելու և ժողովրդի վրայ երկիւղ ազդելու նպատակով՝ ընդհանրապէս հարկաւոր է համարում իր պաշտօնն սկսել մարդկային արիւն թափելով: Նա կամ գլխատում է մի որևէ հարուստ քրիստոնեայ վաճառականի, կամ խեղդել է տալիս մի ենիչէ-րիի, և կամ կախաղան է հանում մի հրէայի:

Արդ, անգլիական վեզիրի բոլոր պատմածներից ակնյայտ էր, որ ինքը երբէք ոչ կտրել էր որևէ աւագակի ձեռքը, և ոչ էլ մինչև անգամ որևէ հացափործի ականջը դամել էր նրա խանութի դռան:

Մի շատ ճոխ ճաշ մատուցուեց նրան. բայց զարմանալի բան, կարծես թէ ոչ մի բան նրա ճաշակի համեմատ չէր: Միրզա Ֆիրուզն իր մատներով հրամցրեց նրան մի քանի լաւ կըտորներ. նա մինչև անգամ իր ձեռքը մխեց նրա առաջ դրուած փլաւի ափսէի մէջ և իր դէպքն էլ տուեց նրան, որ նրանով

շարքաթ խմէր. սակայն չկարողացաւ նրան համոզել որ իր առջև դրուած խորտիկներէից անուշ անէր:

Մենք փորձեցինք նրան բի քիչ գէղէնգէբին ուտացնել. բայց նա խիստ ուշադրութեամբ քննեց դրան, և երբ Հաշէմը իր բոլոր ճարպիկութեամբ կոտրեց այդ իր ձեռներով ու վրայի ալիւրի փոշին էլ փչեց իր բերանով, նա կարծես զգուեց և չկամեցաւ աւելի հետաքրքրուել նրանով:

— Անշուշտ, ասացինք մենք, այս անհաւատը չէ կարող մեզ անմաքուր համարել և մեր ուտելիքը չճաշակել: Այո, նա որ անփոյթ կերպով ուտում է խոզի միս ու խմում է արգելուած գինին՝ չէ կարող մեզ անմաքուր համարել, այն էլ այն ժամանակ՝ երբ մեր դեսպանը իր երկբայութիւնները մի կողմ դրած՝ փակել է իր ականջները մեր սուրբ Մարգարէի պատուէրների դիմաց և վարւում է անհաւատի հետ, որպէս մի հաւատացեալի:

Մենք տեսանք որ դեռ շատ բան պիտի սովորէինք այս տարօրինակ ժողովրդի մասին:

Դեսպանին յաջորդաբար այցելեցին մի քանի ուրիշ վէզիրներ, որոնց իւրաքանչիւրը պետական առանձին պաշտօնի տէր էր: Նրանց թոււ և կար մէկը, որի մասին մենք ամենևին չէինք կարողանում հասկանալ թէ նա ինչ պիտանութիւն ունէր պետութեան համար: Նա կոչւում էր ջանգալի ¹⁾ վէզիր և մեզ ասուեց որ նրա միակ զբաղմունքն այն էր, որ հաշիւ տայ երկրում գտնուող բոլոր անտառների մասին:

Մենք այն եզրակացութեանն եկանք, որ ուղղակի դրամ վառնել էր՝ ռոճիկ տալ մի պաշտօնեայի այնպիսի բանի համար, որպիսին Պարսկաստանում արգելք ու խոչընդոտն է համարւում: Ախր, անտառները մեզ մօտ հչինչ արժէք ու սշանակութիւն չունին. բացի այդ՝ նրանք փչացնում են երկրի երեսը:

Իսկապէս շատ տարօրինակ կը թուար մեր արքայից-արքային, եթէ մենք նրան յայտնէինք, որ այն՝ ինչ Պարսկաստանում գործ է ածուում միմիայն որպէս վառելանիւթ, այստեղ՝ Անգլիայում այնքան մեծ արժէք ու նշանակութիւն ունի, որ կառավարութիւնը հարկ է համարում մի առանձին վէզիր պահել ու վարձատրել, որպէս անտառների տեսուչ:

Մեր կարծիքով մի կառավարութիւն պարտաւոր է անվերջ ծախքեր անել, եթէ հարկաւոր է համարւում Ալլահի պարգեւած ամեն մի բարիքի համար այդպիսի մի բարձր պաշ-

1) Ջանգալ պարսկերէն նշանակում է անտառ:

տօն հաստատել. որովհետեւ, եթէ այդպէս է, մենք էլ մեր կողմից կարող ենք մի առանձին վէզիր նշանակել մեր անապատների համար և ստիպել նրան մի տոմարում հաշուի մէջ բերել այն միլիօնաւոր ֆարսաղներով անպէտք, անմշակելի, աւազուտ անապատները, որ տարածուած են մեր երկրի վրայ. կամ թէ չէ, ստիպել նրան իր ժամանակն անցկացնել համբելով Գիլանի և Մազանդերանի անտառների անթիւ ու անհամար ծառերը և յայտնել Շահին թէ նրանց մէջ քանի զայլիւր, արջեր ու առիւծներ են ապրում:

Երբ այս դիտողութիւնները մէհմանդարին արինք, նա մեզ հասկացրեց ամէն բան, բացատրեց որ Անգլիայում գերանը շատ մեծ արժէք ունի: Նա մեզ հասկացրեց որ, Անգլիայի գոյութեան համար փայտը նոյնքան հարկաւոր է, որքան իրանի համար հարկաւոր է լաւ ձիերի մի ցեղ և սուր թրեր:

Եւ յիշաւի, մենք շուտով համաձայնեցինք նրա հետ, երբ դեսպանին այցելեց նաւային վէզիրը, որի պաշտօնն այնքան մեծ կարեւորութիւն ունէր, որ նա ստիպուած էր շատ օղնականներ ունենալ իր պաշտօնը վարելու համար:

Քանի որ մենք ինքներս արդէն նաւարկել էինք երկու մարտանաւերով (բացի այն որ նրանցից շատերն էլ տեսել էինք), կարողանում էինք լաւ հասկանալ նրանց կարեւորութիւնը, որովհետեւ մենք տեսնում էինք որ եթէ այդպիսի նաւերից մէկը կառավարելու համար հարկաւոր էր մի պետական մարդու բոլոր իմաստութիւնն ու փորձառութիւնը, որչափ աւելի մեծ իմաստութիւն ու փորձառութիւն է հարկաւոր կառավարելու այդպիսի նաւերից մի հազարին, որ, ինչպէս մեզ ասուեց, ունէր Անգլիայի Շահը:

Պարսկաստանում, թէպէտ ծովը մի կողմից ողողում է Բուշիրն ու Հիւրմուզը, և միւս կողմից էլ Ասաբարաղն ու Ռաշտը, այնուամենայնիւ մենք հազիւ գիտէինք թէ ինչ է նաւը: Երբ, Ալլահի ողորմութեամբ վերադառնաւ մեր հայրենիքը, մեր ճանապարհորդութեան մասին այն բոլոր պատմութիւնները որ պիտի պատմենք այնտեղ՝ կարող են «Հազար ու մէկ գիշեր»-ի պէս մի պատմութիւն կազմել:

Շատ այցելուներ եկան. բայց թէ հիւրեր, ինչ գործի տէր մարդիկ էին նրանք՝ մենք չէինք կարողանում ստուգել: Մեզ համար նրանք նկարագրուեցին որպէս պաշտօնական մարդիկ, որոնց մի քանիսը պալատականներ էին, մի քանիսն այս ինչ և մի քանիսն էլ այն ինչ պաշտօնի տէր անձնաւորութիւններ էին:

Մեր ամենամեծ դժուարութիւնը նրանում էր, որ երբ այդ

մարդիկը գալիս էին մեզ այցելելու, մենք չէինք կարողանում իմանալ թէ նրանցից որոնք էին երեւելիները և որոնք չէին: Մենք յոյս ունէինք, որ ժամանակի ընթացքում կը կարողանայինք նրանց ճանաչել, նրանց զանազանել միմեանցից: Նրանք բոլորն էլ իրանց երեսները սափրել էին: Նրանք միեւնոյն տեղումն ¹⁾ էին նստում: Բոլորն էլ միեւնոյն յարգանքներն էին մատուցանում ու միեւնոյն նկատողութիւններն անում:

Դեռապանի այցելող անձնաւորութիւններից մէկը մասնաւորապէս շատ հետաքրքրութիւն պատճառեց մեզ, որովհետեւ նրան տեսնելով՝ յիշեցինք թէ նրա պաշտօնի տէր անձը ինչքան բարձր կարեւորութիւն ունի մեր Շահի պալատում: Այս անձը արարողապետն էր. Բայց ինչ մեծ տարբերութիւն սրա և նրա մէջ, Իշկազասին, Շահի արարողապետը իր արտաքին տեսքով մի այնպիսի անձնաւորութիւն է, որին աշխարհում շատ քչերը կարող են նմանուել և հաւասարուել: Նա զաջարներից է—Շահի տոհմից—այն զաջարներից՝ որոնք նշանաւոր են իրանց մօրուքների փառաւորութեամբ: Ալլահն նրան էլ պարգևել է մի մօրուք՝ որ աւելի փառաւոր է քան նոյնիսկ իր տէր—արքայինը:

Նրա զգեստն ու նրա վարքը աննման են. լեզուն նոյնպէս: Նրա գիտութիւնը «չըմ նւ հըմ»-ի ²⁾ մէջ՝ աւելի մեծ է քան պալատականներից որ և է մէկինը: Նա Իրանի որդու մի կատարեալ տիպ է. սակայն մեզ հետաքրքրութիւն պատճառող յիշեալ անձնաւորութիւնը—Անգլիայի Շահի արարողապետը, մի ծեր, պարարտ, բանից ընկած խան էր և այնքան երերւում էր մի զոյգ ուռած սրուքների վրայ, որ մեզ ընականաբար թուաց թէ գուցէ ոտներն հէնց նոր էին ազատուել Փալախկայից: Նա շատ արդարացուցիչ խօսերով ներողութիւն խնդրեց որ չէր կարողացել աւելի շուտ մեզ այցելել և մենք հարցրինք նրան թէ հիմա էլ որ եկել էր՝ ի՞նչի համար էր եկել...

Միեւնոյն ժամանակ, որովհետեւ Միրզա Ֆիրուզն անձկահօք սպասում էր այն բոպէին, որ ներկայանար Անգլիայի Շահին և անհամբեր էր այդ մասին մի լուր, մի պատգամ ստանալու, ուստի նա շատ թախանձեց նրան, որ մեզ յայտնէր, թէ ին՞չ ժամանակ պիտի պատրաստուէինք:

Ի մեծ ուրախութիւն մեր, նա յայտնեց դեսպանին, որ թափաւորը, որը ընդհանրապէս քնակւում է ամառանոցի

1) Պարսկաստանում մի անձնաւորութեան աստիճանը յայտնւում է նրանով թէ նա գորգի որ կողմն է նստում:

2) Շողոքորթութիւն, մեծարանաց խօսքեր:

պալատում, երեք օրից յետ կը վերադառնար քաղաք և այնտեղ նա կը ընդունէր Միրզա Ֆիրուզին: Մեր ուրախութեանը չափ ու սահման չկար:

—Ալհամդ-օլ-Ալլահ (փառք Աստուծոյ) գոչեցինք մենք, ու այդ պառաւ, կաղի կաղ շարժող, տոմարող խանին այնքան մեծարեցինք, այնքան շողորթեցինք, այնքան հաճոյացնող խոստովանութիւններ արինք, որ կարծես թէ նա հէնց ինքը Անգլիայի թագաւորը լինէր:

Գլ իս

Միրզա Ֆիրուզը պատրաստուած է Անգլիայի Շահին ներկայանալու: Մի դժուարութեան է հանդիպում:

Թէպէտ ծերունի արարողապետի՝ դեսպանին տուած լուրը պատշաճ ձևականութեամբ չէր, այնուամենայնիւ մենք սկսեցինք պատրաստութիւններ տեսնել անգլիացւոց Շահին ներկայանալու համար:

Մենք բաց արինք հետներս տարած ընծաների սնդուկները և մի ցուցակ կազմեցինք: Մենք ուշադրութեամբ քննեցինք արքայից-արքայի՝ մեզ տուած յանձնարարական նամակի բովանդակութիւնը: Դեսպանն էլ սկսեց քննել իր շորերը, տեսնելով թէ որ ձեռքը ամենայարմար կըլինէր հագնելու և թագաւորին ներկայանալու համար:

Մենք հետաքրքրուեցինք նոյնպէս իմանալու թէ որն է ամենալաւ ձեւ, ձիերը ընծայելու: Նրանք անվտանգ հասել էին, թէ և շատ տարօրինակ էր որ ոչինչ չէր պատահել նրանց: Այն ժամանակ երբ հեռանում էինք Պարսկաստանից, որմէ մտքից էր անցնում որ նրանց վիճակում էր թողնել այն երկիրն ու այն մարգագետինները ուր նրանք ծնուել ու մեծացել էին՝ ամիսներով ճանապարհորդելու համար ծովերի վրայ:

Միրզա Ֆիրուզը վճռել էր անգլիացւոց Շահին ընծայել Մորվարին (Մարգարիտը) որպէս մի ձի՝ որին պատուել էր տիեզերքի ապաւէնը՝ հեծնելով նրա վրայ: Ուստի մեծ ցանկութիւն ունէր նրան ի ցոյց հանել այն բոլոր փառքով ու շքով որին արժանանում է մի արքայական ձի:

Նա հետաքրքրուեց մէհմանդարից իմանալու թէ՛ արդեօք մեր նախնի ձիերի օրինակին հետեւելով լաւ չէր լինիք Մորվարու փորը, սրունքները և կուրծքը ներկել հինայի ոսկեփայլ գոյնով, Բայց նա յուսահատուեց, երբ լսեց, որ այդ ներկի գործա-

ծուծիւնը, որ այնքան փայլ ու դեղեցկութիւն է ընծայում թէ մարդին և թէ գազանին՝ դեռ չէր մտել այս խաւար վայրերը. հետեապէս հարկաւոր էր ուրիշ հնարք գործ դնել:

Այդ մասին մէհմանդարը խոստացաւ գործ դնել իր՝ ինչպէս և իր երկրի բոլոր արուեստագէտների հանձարը, և միեւնոյն ժամանակ մենք մնացինք այն յուսով որ, երբ օրը գար՝ ամեն բան կարգադրուած ու պատրաստուած կը լինէր, մեր Շահի՝ ինչպէս և մեր երկրի բարձր պատուին արժանաւայելի:

Մենք անչափ ուրախացանք, երբ մէհմանդարը վաւերացրեց այն՝ ինչ որ արարողապետը մեզ յայտնել էր: Նա ասաց որ Անգլիայի Շահը մեզ կընդունէր մի շաբաթ չանցած, և երբ Մահամէդ բէգը համեմատեց մեր ներկայանալու օրը՝ մեր օրացոյցի համապատասխան օրուայ հետ, մենք շատ ուրախացանք տեսնելով որ այդ օրը մեր ամենաձախորդ՝ այսինքն «Յշուառութեան չորեքշաբթի» ¹⁾ օրուայ հետեալ օրն էր ընկնում:

Միրզա Ֆիրուզը յետոյ հետաքրքրուեց թէ ինչ արարողութիւն պէտքէ կատարուէր թագաւորին ներկայանալիս:

Մէհմանդարը ասաց.

— Դուք կընդունուէք նոյն պատուով, որով ընդունում են միւս պետութիւնների դեսպաններին:

— Ինչպէս, զարմացաւ Միրզա Ֆիրուզը:

— Թագաւորը, ասաց մէհմանդարը, ձեզ կընդունի իր սենեակում: Դուք ձեր կառով կը գաք նրա պալատը: Այնտեղ ձեզ կը հանդիպի արարողապետը, և արտաքին գործերի նախարարն էլ ձեզ կը ներկայացնի. յետոյ դուք էլ կը ներկայացնէք ձեր վկայագրերը:

— Եւ, ասաց դեսպանը, դուք կարծում էք, որ այդպիսի ընդունելութիւնը ինձ բաւականութիւն կը տալ:

— Եւ ինչո՞ւ չի տալ, ասաց մէհմանդարը: Բոլոր միւս դեսպաններն էլ նոյն ձևով են ընդունւում. դրանից աւելին դուք ինչ էք ուզում:

— Ինձ ինչ թէ միւս դեսպաններն ինչպէս են ընդունւում, զայրացած նկատեց Միրզա Ֆիրուզը— Շահի ներկայացուցիչը: Աշխարհում տարբեր անուան ու տարբեր պատուի տէր թագաւորներ կան և նրանք ունեն իրանց ներկայացուցիչները: Ես միայն գիտեմ թէ ինչպիսի թագաւորի ներկայացուցիչ եմ:

¹⁾ Պարսիկները բոլոր չորեքշաբթի օրերը ձախորդ օր են համարում: Մաֆար ամսի վերջին չորեքշաբթի օրը այն օրն է, երբ նրանք սպասում են որ դատաստանի փողերը հնչուեն և այդ պատճառով բոլոր չորեքշաբթի օրերը ձախորդ ու դժբաղդ օր են համարւում:

իմ վեհապետը բազմում է աշխարհիս ամենահինաւորաց զահի վրայ: Եւ եթէ դուք կամենում էք իմանալ, թէ ովքեր էին մեր նախնիքը, ես կարող եմ նրանց ծագումը յետ տանել մինչև Նոյի ժամանակը: Չմոռանաք որ փիղղաղիանները մարդիկ էին, նշանաւոր մարդիկ, և եթէ մեր նախնի վեհապետներին դուք համեմատէք ձեր ֆրանկ թագաւորների հետ, որոնց անունները դեռ Պարսկաստան չեն հասել, դուք պարզ կը տեսնէք, որ շատ հեռու չէք այն վայրից, ուր մարդիկ ճիշտ են տալիս իրանց յիմարութիւնները»:

—Այդ ինչ խօսքեր են, բացազանչեց մէհմանդարը: Մի-թէ դուք կամենում էք փոխել մեր երկրի ձևերն ու սովորու-թիւնները: Եթէ ձեր Շահը ցանկանում է մօրուք պահել, այդ չէ նշանակում որ մերն էլ պարտաւոր է նոյնն անել: Ամեն ազգ իր առանձին սովորութիւններն ունի:

—Ձեր Պարսկաստանի դեսպանը, ասաց Միրզա Ֆիրուզը, երբ թէհրանի կայսերական դուռը հասաւ, միթէ ընդունուեց նոյն ձևով, ինչպէս ես եմ ընդունուում այստեղ: Անշուշտ ոչ: Շահի ամուսն¹⁾ ուղարկուեց ողջունելու նրա ժամանումը՝ նախ քան նրա քաղաք հասնելը, և երբ նա ներկայանում էր Շահին, փո-ղոցներում խմբուած զօրքերը հրացանաձգութեամբ ողջունեցին նրան. ամեն կողմից շաքար թափեցին նրա ձիու ոտների տակ, թմրուկների, փողերի և ծնծղաների ձայները թնդացրին ամբողջ քաղաքը, բազարները զարդարուեցին և քաղաքի բոլոր ազգա-բնակչութիւններին հրամայուեց ամեն կերպ պատուել ու յար-գանք մատուցանել նրան: Բացի այդ բոլորից, նրան զգեստա-ւորեցին պատուոյ հանդերձով և թոյլ տուին կանգնել նոյն սեն-հակում, ուր թագաւորաց-թագաւորը ինքն է բազմում: Եւ, Մարգարէի մօրուքը վկայ, ես երդուում եմ որ, եթէ ինձ հետ էլ նոյն ձևով չվարուեն այստեղ, ես իսկոյն կը գնամ պալատը իրրե մի կողմնակի անձնաւորութիւն, կը խնդրեմ որ ինձ թոյլ տան ներկայանալ թագաւորին, իմ Շահի նամակը կը յանձնեմ նրան, և, «Նորա հաֆէզ²⁾» ասելով, անմիջապէս կը թողնեմ, կը հեռանամ այս երկրից ու կը գնամ այնտեղ, որտեղից եկել եմ:

—Դուք կարող էք այդպէս ասել ու անել, ասաց մէհման-դարը. բայց իմացէք որ իմ թագաւորն էլ նոյնպէս մի մարդ է և շատ հաւանական է, որ հարկաւոր կը լինի այդ հարցի մասին

¹⁾ Ամուսնանալու է հօրեղբայր: Դա մի անուն է, որ յաճախ արը-ւում է խաղընկերներին կամ սիրեկան բարեկամներին: Այստեղ այդ բանը վերջին մտքով է գործածուած:

²⁾ Աստուած ձեզ պահպանի, միայն բարով

Մ. Բ.

նրա խորհուրդը հարցնելու եւ ենթադրեալք թէ նա չհամաձայնուեցիր որ դուք այցելէք իրան...

Մենք տեսանք որ փոթորիկը պայթելու վրայ էր։ Միրզա Ֆիրուզի դէմքը սոսկալի դարձաւ, մազերը ցցուեցին և նա ծածկուեց քրտնիքով։

—Վերջապէս, գոռաց նա, աչքերը կրակ կտրած,—վերջապէս ես դեսպան եմ, թէ՞ չեմ։

—Իսկ իմ թագաւորը թագաւորը է՞ թէ չէ՞, հարցրեց մէհմանդարը. և զայրացած՝ իր լեզուով մըթմըթաց dam¹⁾ կամ dammy բառը։

Միրզա Ֆիրուզը լսելով այս բառը և յիշելով որ ինքը նոյն բառը յաճախ լսել էր նաւի տախտակամածի վրայ, կարծեց թէ դա մի ածական է որ մէհմանդարը տուեց իրան. ուստի կատաղութեամբ գոռաց։

—Ինձ դամ էք ասում, ես դամ եմ, հմ. եթէ ես դամ եմ, դուք դամի հայրն էք։ Եւ ինչո՞ւ պիտի մնամ այստեղ, որ դամ կոչուեմ։ Ես էլ իմ երկրում մի մարդ եմ։ Ես կ'ապականեմ դամի հօր գերեզմանը. ես կանեմ ան, ինչ մի էլ կարող է անել իր մօրը, քրոջը, կնոջը և իր սերնդին։ Միթէ՞ ես այսքան ճանապարհ եմ եկել, որ այստեղ դամ ուտեմ, ան էլ մոյսպիսի մարդի ձեռից։

Եւ նա դուրս թռաւ սենեակից։ Մէհմանդարը մնաց ապշած, շուարած և անպատիւ եղած զգաց իրան։ Յետոյ իր գլխարկը ծածկելով իր ժամացոյցին նայեց, իր պատմութեանի կոճակները դեցեց, ձեռնոցները հագաւ, ձեռնափայտը վերցրեց և մեզ՝ «ձեր ստուերը չը պակասի» ասելով՝ մտախոհ հեռացաւ։

Մենք որ սովոր էինք դեսպանի վարքին՝ պատահածի մէջ ոչ մի արտաքոյ կարգի բան չտեսանք։ Նա իր դերը խաղաց, որպէս մի կարող գործակալ և ցոյց տուեց որ ինքը պաշտպանում էր տիեզեքի ապաւէնի պատիւը։ Նա գիտէր, որ իր բռնած ընթացքը իրեն համար նպաստաւոր գործ կը տեսնէր իր Շահի պալատում, և որ իր թշնամին—Միրզա Շէֆին ոչինչ չէր կարող անել իրեն։

Նա շուտով վերադարձաւ մեզ մօտ. շատ գոհ էր իրանից և շատ էլ հրճուեց, երբ նրան ասացինք.

—Իսկապէս եթէ ֆրանկները կամենում են դաս առնել

1) Damm բառն է եղել, որ անգլիացիք յաճախ բարկացած ժամանակ գործ են ածում, և որը նշանակում է դատապարտել, մեղադրել, անէծք. սակայն դեսպանի լսածը dam է եղել որ միևնոյն հնչիւնն ունի, իսկ նշանակում է մայր-անասունների։

դեպքանական պարտականութիւնների վերաբերմամբ՝ միայն ձեզ մօտ պիտի գան:

— Նրանք կարծում են, ասացի ես, թէ, որովհետեւ իրանց տներում այնպիսի հայելիներ ունին՝ որոնցից մենք չունենք, թէ, որովհետեւ կարողանում են ժամացոյցներ ու գրչահատեր շինել, կտաւ ու ասուի պատրաստել, և որովհետեւ տիրել են Հնդկաստանը, որը մի ժամանակ մերն էր, հետեւապէս իրաւունք են համարում կարծել թէ մենք նրանց ստորագասներն ենք, թէ մենք նրանցից ցածր պիտի նստենք, և թէ նրանք կարող են մեզ առաջնորդել, թէ կարող են մեր երասանից բռնած քաշել, որպէս եղաքի ձիեր, սակայն, փառք Մարգարէին, որ այդպէս չէ: Մենք պարսիկ ենք, և, ինչպիսի մեր դեպքանի օգնութեամբ նրանց կը խաղացնենք մեր ձկոյթների ծայրին:

— Բաւի, բաւի, բացազանչեց Մահմէդ բէգը: Մեծ է Ալլահ. Ալլահ պահի ու պահպանի մեր դեպքանին: Թող Ֆրանկն անի ինչ որ կամենում է. մենք միւսոյն ժամանակ պիտի յիշենք, որ դարձեալ անհաւատ է: Թող նա ուտի ինչ որ կամենում է—խողի կամ գառան միս—դարձեալ նա պիտի է, դարձեալ նա անմաքուր է:

Այս խօսքերից յետոյ մենք նստեցինք գոհ սրտով և առաւօտեան ժամերն անցկացրինք գովասանելով Միրզա Ֆիրուզին, նրա համար որ նա, օտար երկրում, այնքան արիւթեամբ պաշտպանում էր մեր Շահի բարձր պատին ու անունը: Օրից բաւական անցաւ և մէհմանդարը չերեաց: Մենք սկսեցինք կասկածել որ մի գուցէ Ֆրանկները չեն հաւանում այն ձեւ՝ որով մենք սկսել էինք մեր բանակցութիւնները: Մենք մտածեցինք, որ եթէ պատահէր, որ նրանք մեր վզից ու ոտից բռնելով դուրս վռնտէին իրանց երկրից, այդ դէպքում Միրզա Շէֆին կարող կը լինէր հասկացնել արքայից-արքային, թէ իր մեծութեան ներկայացուցիչը ողջմտութեան պակասութեան պատճառով՝ ստացել է այնպիսի մի խալաթ (պարզ), որպիսին տրւում է միայն սոլթանութեան պապին »):

Այս երկիւղը պարզապէս պաշարեց Միրզա Ֆիրուզին: Նա սկսեց շատ անհանգստանալ և ամէն բոլոր հետաքրքրուեց թէ արդեօք մէհմանդարը վերադարձի է թէ՞ չէ: Ինքն իրան սփոփելու համար, սկսեց ման գալ տան մէջ և ում որ հանդիպում էր հարցնում էր.

— Միթէ ես լաւ չառնցի. իսկապէս իմ տուած պատասխանները նետերի պէս էին. մի ղզլբաշ, մի պարսիկ, ինչպէս ես,

1) Տխմարութեան պապ՝ պառաւած էշ:

այս երկար ճանապարհը չէ եկել, որ թոյլ տայ մարդկանց ծիծաղել իր մօրուքի վրայ...

Դեսպանի անհամբերութիւնն ու մտահոգութիւնն այնքան սաստկացաւ, որ մի նարինջ ինձ տալով, պատուիրեց գնալ մէհմանդարի տունը և խնդրել նրանից որ այդ օրը երեկոյեան անպատճառ շնորհ բերէր իր մօտ միասին ընթրելու:

Ես գիտէի, որ երբ անհաւատ ֆրանկները մի անգամ բարկանում են՝ շատ դժուար է նրանց հանգստացնել, եթէ մարդ նրանց հետ վարուելու շնորհքը չունի, ուստի ես շատ զգուշութեամբ ներկայացայ նրան, սակայն շատ չզարմացայ որ փոխանակ շատ վատ տրամադրութեան կամ թիւր բնաւորութեան մէջ գտնելու նրան՝ տեսայ որ նա այնպէս էր, ինչպէս լինում էինք պարսիկներս թունդ վիճաբանութիւնից յետոյ, այսինքն այնպէս՝ որպէս թէ ոչինչ չէ պատահել: Նա լսեց դեսպանի պատգամը և սիրով համաձայնուեց կատարելու նրա ցանկութիւնը:

Երբ նա եկաւ, ես սենեակումն էի, Միրզա Ֆիրուզի մօտ: Նկատեցի որ նրանք միմեանց բարեկեցին սովորական ձևով: Դեսպանը իր ձեռքը մէհմանդարի մէջքին դնելով ու յետոյ նրա կողքին թեթև կերպով խփելով՝ ասաց:

— Մաշալլահ, մաշալլահ... իսկապէս դուք մահը էք... դուք տեսէք ի՞նչ է նշանակում Պարսկաստանում լինելը: Արդ, եթէ ձեր տեղ մի ուրիշ ֆրանկ լինէր, որ ճանապարհորդութիւն արած չլինէր, իսկապէս շատ կը բարկանար, բայց դժբ, դժբ աշխարհ տեսած մարդ էք, դուք լաւ ճանաչում էք աշխարհին, դուք լաւ գիտէք թէ երբ պիտի բարկանալ, և երբ պիտի թողնել բարկութիւնը: Հաֆէզը շատ ճիշտ է ասել թէ՝ «ճշմարիտ սէրը յիմարի բարկութեան նման է. որ շարունակում է բորբոքուել մինչև անգամ, երբ նրա պատճառն արդէն անցած է լինում»:

Դեսպանին պատասխանեց մէհմանդարը:

— Ձեր բարեկամութիւնը ամենեւին չպակասի: Ես ձեր ցանկութիւնը յայտնել եմ արտաքին գործերի նախարարին:

— Լաւ, ասաց դեսպանը յանկարծ յուզուելով, լաւ. բայց նա ի՞նչ ասաց:

— Նա ասաց, պատասխանեց անհաւատը, որ դուք կարող էք առանց դժուարութեան հրապարակով ներկայանալ թագաւորին: Մենք բազմաթիւ դօրք ունենք, բազմաթիւ էլ կառքեր, շատ գեղեցիկ շորեր, շատ սիրուն բաներ, և դուք կարող էք ներկայանալ մեր Շահին ի՞նչ կերպով, ի՞նչ ձևով, որ ցանկանաք:

— Զարմանալի, բացազանչեց դեսպանը, զարմանալի, ես չեմ կարողանում հասկանալ, թէ դուք ինչպիսիք եք ինչպէս մարդիկ էք: Դուք դժուարութիւններ չէք յարուցանում, դուք առիթ ու տեղիք չեք տալիս բանակցութիւններին:

— Զնչին բաների համար իհարկէ ոչ, պատասխանեց մէհմանդարը:

— Ինչ, զնչին բան էք ասում, զարմացաւ դեսպանը: Մի-թէ դուք մի դեսպանի ընդունելութիւնը զնչին բան էք համարում: Այդպիսի խնդիրների մասին, Պարսկաստանում ոչ մի քայլ չենք անում առանց լաւ մտածելու, առանց լաւ կշռադատելու, և դուք այստեղ թագաւորների բարձր արժանապատու-թիւնը ոչինչ էք համարում:

— Եւրոպայի ազգերը բաւական յիմար էին անցեալ ժա-մանակներում, ասաց մէհմանդարը. յիմար էին, որ քաղաքավա-րական ծէսերը պետական գործեր էին համարում և այդպիսի ծէսերի, այդպիսի ձևերի մասին շատ բժախնդիր լինելով՝ կոր-ցնում էին իսկապէս օգտակարը: Բայց այժմ աւելի խելացի են. այժմ մենք այդ ծէսերը երեսայական խաղ ենք համարում: Ինչ և է, քանի որ դուք պարսիկ էք, մենք առանց դանդաղելու ձեզ կ'ընծայենք որքան էտիկէտ որ կը կամենաք:

Միւրգա Ֆիրուզը շոյեց իր մօրուքը, սրեց իր բիւսերը և պահ մի խոր մտածումների մէջ ընկաւ: Նա զգաց որ ինքը ստոր-ացել էր, վարկաբեկ էր եղել Ֆրանկների մօտ, և միևնոյն ժա-մանակ էլ գիտէր, որ ինքը ուրիշ կերպ չէր կարող վարուել:

— Ուրեմն, բացազանչեց նա, ուրեմն ինչպիսիք եք կարծում են, որ մենք ջանգալի ¹⁾ մարդիկ ենք, էշեր ենք, բռնակիր անասուններ ենք և ամենեւին չգիտենք թէ, աշխարհն ի՞նչով է ղեւղւում: Ե՛, թող այդպէս լինի, թող, այդպէս կարծեն. բայց իմացէ՛ք, որ մի ազգ, որ իր ծագումը հասցնում է մինչև Ալեքիդը, մի ազգ որ ունեցել է Ալեքիդի խան, Թիմուրլէնգ, Նադիր Շահ և Աղա Մոհամէդ խան, այո՛ և՛ Փաթ Ալի Շահ՝ այդպիսի մի ազգ՝ սովոր չէ. երեսայական խաղի և երբէք տրամադիր չէլի վսեմ ու բարձր պատիւը պահպանելու համար օրինակ վերցնելու Ֆրանկնե-րի թագաւորներից:

Այս խօսքերից, ինչպէս և մի քանի նման ասուիսից յետոյ, նրանք ընթրեցին, և հիւրասիրութեան սեղանի սփռոցը բարեկամական սիրոյ ասպարէզ դարձաւ:

1) Անտառի

ԳԼ. ԻԲ.

Միրզա Ֆիրուզը ներկայանում է Անգլիայի թագաւորին

Վերջապէս հասաւ շատ բաղձալի օրը, և մեր ամբողջ տան մէջ սկսեցին լսուել պատրաստութիւնների ձայներ. սակայն դժբաղդարար այդ առաւօտը երբ ես զարթնեցի, սիրտս այնքան ցաւում էր, որ բոլորովին անկարող էի տեղիցս շարժուելու: Հետեւաբար դեսպանից թոյլտուութիւն խնդրեցի. տանը մնալու: Նա իսկոյն շնորհից այդ թոյլտուութիւնը: Եւ շատ զարմացայ, որ նա ամենևին չներհակեց, որովհետեւ գիտէի թէ՛ որքան էր ցանկանում այդպիսի ժամանակներում շրջապատուած լինել իր բոլոր հետևորդներով: Եւ այն եզրակացութեանն եկայ, որ նա տակաւին ինձ վրայ նայում էր որպէս իր շարժումները դիտող լրտեսի, այդ, որպէս մէկի վրայ, որը, իր ենթադրութեամբ, նշանակուած էր հսկելու իր վրայ և տեղեկագրելու Շահին, եթէ նա թոյլ վարուէր օտար երկրում իր վեհապետի վսեմ անունն ու պատիւը պաշտպանելու և բարձրացնելու պարտականութեան մէջ:

Ձուարճալի էր տեսնել թէ դեսպանն ինչպէս էր հագնուել թագաւորին ներկայանալու համար: Ֆրանկները շատ քիչ կարող էին հասկանալ թէ նա ինչ առանձնաշնորհութիւն էր վայելում աւելացնելով իր զգեստի վրայ այնպիսի բաներ, որպիսին նա չէր համարձակուի թէ հրանում աւելացնել, ինչպէս որ չէր համարձակուի մի մոլլայի ներկայութեամբ խոզի միս ուտել: Նա իր գլխարկի վրալ աւելացրել էր ջիղլան, այսինքն թագաւորական որոշիչ նշանը: Նա խրել էր իր գոտու մէջ և կողքից կախ էր արել թանկագին քարերով կոթը զարդարուած դաշոյնն ու թուրը, և իր գոտուց կախել էր մարգարտեայ փունջը, որպիսին կախում է մի վէզիր:

Երբ նա այդպէս զարդարուած դուրս ելաւ, մենք բոլորս միաբերան գոչեցինք «մաշալլահ» և ակամայից խոր գլուխ տալով՝ երկուտակուեցինք նրա առաջ—մի յարգանք, որ մենք մի միայն մեր շահագրանքին ենք մատուցանում:

Ախոռապետը շուտով մեզ մօտ եկաւ և յայտնեց թէ ձիերը պատրաստ են, և որ մեծ դժուարութեամբ իրան աջողուել էր անհաւատի ձեռքով ներկել տալ Մորվարուն:

—Մորվարին, ասաց նա, ներկուել է, բայց այնպէս որ բաւականութիւն տայ Անգլիայում Պարսկաստանում երէրք չի հաւանուիլ այդպէս, որովհետեւ անգլիացի ներկարարը

նրան փոխանակ փայլուն նարնջի գոյն տալու՝ մզրած-թուխ գոյն է տուել:

Կէսօրուան մօտ փողոցները լցուեցին ղորախմբերով, որոնք կարգ ընկան երկու կողմերից: Յետոյ շուտով մեր տան դուռն եկան մի շարք շատ փառաւոր կառքեր, որոնք շատ շքեղօրէն զարդարուած էին. ի հարկէ Քրանկների ճաշակով: Կառապանները հագնուած էին շատ ճոխ կերպով և կառքերը շրջապատուած էին բազմաթիւ ծառաներով:

Պալատական մի մեծ խան էլ անգլիական Շահի կողմից և՛լաւ դեսպանին պալատ հրաւիրելու, և երբ ամեն բան պատրաստուեց, դեսպանը իր շքախմբով դուրս ելաւ տնից և մտաւ կառքերից մէկի մէջ, ուր, ինչպէս մեզ հաւատացրին, նստում է միմիայն թագաւորը:

Թափօրը յառաջ շարժուեց: Փաթաթուած իմ պարսկական ոչխարի մորթէ մեծ վերարկուի մէջ՝ նայում էի պատուհանից: Ես յիշեցի այն թափօրը՝ որով անգլիական դեսպանը Թէհրանում ներկայացաւ Շահին, և իմ մտքում հասեմատեցի այն թափօրը այս մէկի հետ, որ անցնում էր աչքիս առաջ:

«Պիտի խոստովանուել—մտածեցի ես որ, իմ հայրենի երկրում, ինչպէս և Թիւրքիայում, թափօրները շատ չաւելի փառաւոր են լինում քան Փրանկստանում՝ եթէ թափօրների նմոյշն այս է որ ես տեսնում եմ:»

Մի բան կամ այն բաները որ գլխաւորապէս ուշադրութիւն էին գրաւում՝ մեր ձիերն էին, որոնք իրանց աշխոյժ խաղերով, խայտանքներով ցոյց էին տալիս, որ շատ հրճուած էին որ մի անգամ ևս դուրս էին բերուել. բայց մնացած բոլորը՝ կառքեր էին, որոնք թէև շատ շքեղեայց ուշադրութիւն գրաւելու համար շատ չնչին բաներ էին:

Արդ, քանի որ մեր երկրում թափօրները ձիերով են կատարուում և ոչ կարքերով՝ ուլ էլ որ լինի այն անձը, որի համար կազմուում է թափօրը, իսկոյն աչքի է ընկնում և հասարակութիւնը տեսնում է նրան. նա հասարակութեան հիացմունքի առարկան է դառնում ու մեծ հետաքրքրութիւն է դարձնում:

Ես համբերութեամբ սպասեցի մինչև դեսպանը վերադարձաւ: Նա վերադարձաւ նոյն շքով, ինչպէս որ գնացել էր, և որովհետեւ ես չափազանց հետաքրքիր էի իմանալու, թէ նա ինչպէս էր ընդունուել պալատում և թէ ամեն բան ինչպէս էր անցել, ուստի իսկոյն գնացի նրա մօտ: Ես նրան գտայ շրջապատուած իր բոլոր հետևորդներով՝ որոնք, բոլորն էլ, ինչպէս երևաց, շատ ուրախ տրամադրութեան մէջ էին:

—Ա՛հ, հանջի, բացագանչեց Միրզա Ֆիրուզը, դու իսկապէս զրկուել ես մի լաւ տեսարանից: Այս թագաւորը շատ զարմանալի բարի թագաւոր է. հոգիս վկայ, երբէք զարմանալի չէ որ ֆրանկներն ա՛յդքան սիրում են իրանց թագաւորին: Գիտե՞ս, նա այնքան սիրով ու քաղցրութեամբ վերաբերուեց դէպի ինձ՝ ինչպէս վերաբերում է մի հայր՝ դէպի իր որդին: Պարզ է որ նա կրում է իր վրայ արքայական իսկական դրօշմը. ճիշտ է, նրա պալատում տիրող ձևերն ու սովորութիւնները տարբեր են մերից, բայց թագաւորներն անշուշտ մի և նոյնն են բոլոր երկրներում, որովհետեւ այստեղ թագաւորի իշխանական հայեացքը, դէմքը ցոյց էին տալիս, թէ նա ինչպիսի թագաւոր է: Նրան տեսնողն իսկոյն յիշում է տիեզերքի ապաւէնին:

—Միայն մէկ մեծ տարբերութիւն կայ երկուսի մէջ, ասաց Մոհամէդ բէգը. այդ այն է, որ այս թագաւորի առջև մարդ կարող է կանգնել բոլորովին ապահով, այն ինչ, Ալլահը գիտէ թէ մեր Շահի առջև կանգնողին ինչ է կարող յանկարծ պատահել... Ֆաթ Ալի Շահի առջև կանգնած ժամանակ հով գիտէ՞ որ ըստէին իր գլուխը կը թռչի, սակայն անգլիացւոյ թագաւորի առջև այդ ասն ու սարսափը մարդ չէ զգում: Նրան շրջապատողները այնքան անհոգ ու ապահով են կանգնում, որ կարծես թէ բոլորն էլ համաստիճան իշխաններ են:

—Ես լաւ խօսեցի չէ՞, լաւ չխօսեցի, բացագանչեց դեսպանը դառնալով ծառաներին:

—Մաշալլահ, գոչեցին բոլորը:

—Պղատոնը ձեզանից աւելի լաւ չէր խօսել, ասաց Իսմայիլ բէգը:

—Յիրաւի՛, շարունակեց դեսպանը, ամեն բան կարգադրուած էր մեր Շահի վեհ պատուարժանութեանը վայել և արժանի. դրանից աւելի լաւ կարգադրութիւն չէր կարող լինել:

—Այո՛, ամեն բան լաւ էր կարգադրուած, ասաց Մոհամէդ բէգը, որովհետեւ երբ մենք հասանք բուսկեհանը ¹⁾, ո՛չ մեր կօշիկները հանեցինք, ո՛չ մինչև դետին գլուխ իջեցրինք, ո՛չ էլ «Ձեռ դուրբանն ենք» ասացինք, ինչպէս անում ու ասում ենք մեր Շահին մօտենալիս:

—Այդ ինչպէ՞ս է հարցրի ես: Միթէ՞ այնտեղ սեամ ու գահ չկան. միթէ՞ այնտեղ որոշ տեղ չկար կօշիկներ հանելու համար:

—Է՛հ, ինչ՞ ես ասում, ասաց դեսպանը: Ես այնքան մօտ

1) Բուսկեհան համբուրելու տեղ: Դա նշանակում է արքայական սենեակը, ուր մօտողը նախ պիտի համբուրէ սեամը, ըստ արևելեան սովորութեան:

էի կանգնել թագաւորին՝ որքան այժմ մօտ եմ կանգնած քեզ։
Ես ինքս, իմ ձեռքով Շահի նամակը նրա ձեռքը դրի։ Թագա-
ւորն ինքն էլ կանգնած էր։ Մենք բոլորս էլ կարծես միեւնոյն
մէջլիսի¹⁾ մարդիկն էինք։ Այս երկրում թագաւորի մօտ գնալը
երեխայի խաղ է, ի նկատի ունենալով թէ մեր երկրում ինչ-
պէս ենք ներկայանում մեր Շահին։ Այստեղ մարդ ոչ ֆալախ-
կան է տեսնում, ոչ դահիճ, և ես իսկապէս հաւատում եմ
որ եթէ մեզանից մէկն և մէկը համարձակուէր թքելու նրա՝
թագաւորի ներկայութեամբ, մէկը այնտեղ դուրս կըգար կ'ա-
սէր՝ «խէյր լինի թուքդ»։

Այդ շատ տարօրինակ է, ասացի ես. թագաւորներն այս
երկրում շատ ողորմելի դրութիւն ունին։

— Այո, բացառանչեց թաղին։ Եւ մենք ֆէրաշներս²⁾ այստեղ
անելու ոչ մի բան չունենք, որովհետեւ այստեղ ամեն մարդ
այնքան բարի է։

— Բայց, ասաց Մոհամէդ բէգը, ես կարծում եմ որ մի
անգամ մէհմահդարն ինձ ասաց որ, եթէ Անգլիայում մի մարդ
հայհոյում է թագաւորին, իսկոյն պատժւում է՝ իր զինիցը
զրկուելով։

— Այդ վատ է, բացառանչեց միրախորը։ Ես կը նախըն-
տրէի երբեմն ֆալախկային ենթարկուել, և լեզուն՝ ինչպէս որ
սիրտս ուզէր, ազատ գործածել, քան բերանս փակել և ֆա-
լախկա չուտել։

— Ղուրումսաղ (կաւատ) ասաց դեսպանը. եթէ այդ խօսքդ
թագաւորը լսի լեզուդ կտրել կը տայ։ Դու քո գործիդ նայիւր,
ձիերովդ զբաղուիւր և այլևս թոյլ մի տալ քեզ այդպիսի յիմար,
իշական խօսքեր խօսելու։ Ո՞վ էր այդ պառաւ մարդը, դար-
ձաւ նա Մոհամէդ բէգին, ով էր այդ պառաւը որ ամեն ջանք
գործ էր դնում իմ առջևից քայլելու, երբ մենք ներկայանում
էինք թագաւորին։

— Ես ի՞նչ գիտեմ թէ ով էր, ասաց արարողապետը։ Երբ
պաշտօնական գաւազանս ձեռքիս դուրս եկայ ճանապարհ բաց
անելու, այդ պառաւը մի երկար ու բարակ փայտ ձեռքին՝
փորձեց ինձ դէն հրել։ Նա տարօրինակ ձևով իր փայտը յետ
ու առաջ էր շարժում, և ինձ թուաց, թէ փայտն այդ կերպ
շարժելը ֆրանկների կարգ ու կանոններից մէկն է. բայց երբ
նկատեցի, որ նրա թևի այդ շարժումը առաջանում էր անդա-
մալուծութիւնից և ոչ թէ սրկէ առանձին սովորութիւնից, և

1) Ժողով խում։

2) Պարսկաստանում ֆէրաշները յանցաւորների ոտների տակին ճի-
պտներով հարւածում են։